ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 216 – Ա 23 ապրիլի 2021 թ.

«ԳԱՎԱՌԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆԸ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի, 14-րդ հոդվածի, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի ու 19-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հուլիսի 7-ի N 992-Ն որոշման 7-րդ կետի պահանջը

որոշում եմ՝

1. Հաստատել 2021 թվականի ապրիլի 27-ին՝ ժամը 11^{00}-ին, «Գավառի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի թափուր պաշտոնի համար մրցույթ անցկացնող մրցույթային հանձնաժողովի կազմը՝ Վահագն Դաբաղյան (Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի խորհրդական), Լուսինե Վարդանյան (մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ), Կարեն Զազյան (մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ), Մարտին Պետրոսյան (մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետի պարտականությունները կատարող), Մարինե Գյարզոյան (մարզպետարանի անձնակազմի կառավարման բաժնի պետ), Արամ Խաչատրյան (մարզպետարանի իրավաբանական բաժնի պետ-գլխավոր իրավաբան), Վարդանուշ Մնացականյան (մարզպետարանի զարգացման ծրագրերի, զբոսաշրջության և վերլուծության բաժնի պետ):

2. Մրցույթային հանձնաժողովի նախագահ նշանակել Մարտին Պետրոսյանին, քարտուղար՝ Վարդանուշ Մնացականյանին:

3. Մրցույթային հանձնաժողովի աշխատանքներին որպես դիտորդ կմասնակցի Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության բժշկական օգնության քաղաքականության վարչության արտահիվանդանոցային բժշկական օգնության քաղաքականության բաժնի պետ Անուշ Պողոսյանը:

4. Հանձնաժողովի լիազորությունները համարվում են դադարեցված մրցույթի ավարտից հետո:

26.04.2021

Գագիկ ՍԱՆՈՍՅԱՆ

ՄԱՐԴՈՒԵՏ՝ Digitally signed by SANOSYAN GNEL 1710830069

Գ. ՍԱՆՈՍՅԱՆ
Ք.Գավառ